

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (27 դեկտեմբերի 1997 թվականի, ՀՕ-186) 19-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.14-րդ ենթակետով՝

«18.14.Սեյսմաշրջանացման (սեյսմիկ շրջանացում, մանրամասն սեյսմիկ շրջանացում, միկրոսեյսմաշրջանացում) աշխատանքների իրականացման լիցենզիայի տրամադրման համար՝ տարեկան

բազային տուրքի
60-պատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմաշրջանացման աշխատանքները ենթակա են լիցենզավորման: «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել լրացում:

«Սեյսմիկ պաշտպանության մասին», «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները իրար համապատասխանեցնելու նպատակով ներկայացվում է սույն նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

Սույն օրենքի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի եւ եկամուտների մասով փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

Սույն օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեում ծախսերի մասով փոփոխություններ չի նախատեսում, իսկ եկամուտների մասով նախատեսում է փոփոխություններ:

Նախագծի մշակման հեղինակները

Նախագիծը մշակել են. «ՍՊԱԾ» գործակալության պետ Ա.Անտոնյանը, «ՍՊԱԾ» գործակալության պետի տեղակալ Հ.Պետրոսյանը, «ՍՊԱԾ» գործակալության բաժնի պետ Ռ.Բաղդասարյանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ պետական կառավարման շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների քննարկման արդյունքների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
<p>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն 20.08.2007թ. 6/2-4-96/8347 գրություն</p>	<p>1. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող լրացումը՝ սեյսմաշրջանացման, սեյսմամիկրոշրջանացման աշխատանքների իրականացման լիցենզիայի տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափի սահմանումը, կատարել օրենքի 19-րդ հոդվածում:</p> <p>2. Առաջարկվում է սեյսմաշրջանացման, սեյսմամիկրոշրջանացման աշխատանքների իրականացման լիցենզիայի տրամադրման համար սահմանել տարեկան պետական տուրք:</p>	<p>1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p> <p>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p>
<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն 15.08.2007թ. ՔՆ-15/2998 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 11.09.2007թ. թիվ Ե-4793</p>	<p>1. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «սեյսմամիկրոշրջանացման» բառը հանել, քանի որ «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիցենզավորման ենթակա են սեյսմաշրջանացման աշխատանքները:</p>	<p>1. Չի ընդունվել: Նախագիծը լրացվել է նոր հիմնավորում-պարզաբանումով, իսկ նախագիծը խմբագրվել և ավելացվել է բաց թողնված «մանրամասն սեյսմիկ</p>

	<p>2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը» բառերով:</p> <p>3. Նախագծի 1-ին հոդվածի «18.12-րդ» ենթակետի համարակալումը վերանայման կարիք ունի, մասնավորապես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի մարտի 24-ին ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-117-Ն օրենքը, որի 7-րդ հոդվածով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը լրացվել է 18.12-րդ և 18.13-րդ ենթակետերով:</p> <p>Միաժամանակ նույն հոդվածում «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «ենթակետով» բառով:</p>	<p>շրջանացում» եզրը:</p> <p>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p> <p>3. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p>
--	---	--

